



Հաստատված է

«Կոնվերս Բանկ» ՓԲԸ Խորհրդի
27.08.2020թ.-ի թիվ 181 որոշմամբ
/թիվ 73 արձանագրության 4-րդ
հարց/

Խորհրդի նախագահ

Արմեն Տեր-Տաճատյան

« 03 » 09 2020թ.

«ԿՈՆՎԵՐՍ – ՏՐԱՆՍՖԵՐ»

ՎՃԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

2020թ. Օգոստոս

ՆՊԱՏԱԿ

«Կոնվերս – Տրանսֆեր» վճարահաշվարկային համակարգի գործունեության կանոնակարգով (այսուհետ՝ Կանոնակարգ) սահմանվում է «Կոնվերս Տրանսֆեր» վճարահաշվարկային համակարգի (այսուհետ՝ Համակարգ) գործունեության կանոնները, դրամական փոխանցումների իրականացման կարգը, միջբանկային հաշվարկների և հավաստագրման գործընթացը, Համակարգի մասնակիցների իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև Համակարգի աշխատանքների կազմակերպման կարգն ու պայմանները:

ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Դրամական փոխանցում – դրամական միջոցների գումարը՝ արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամով, Ռուսաստանի Դաշնության ռուբլով, ԱՄՆ դոլարով, Եվրոյով, որն ենթակա է փոխանցման Փոխանցողի հանձնարարականի հիման վրա և նախատեսված է վճարման Փոխանցողի կողմից նշված Ստացողին, Կանոնակարգով սահմանված պայմաններին համաձայն: Դրամական փոխանցումները կատարվում են Մասնակիցների դրամարկղեր կանխիկ դրամի մուտքագրումով, ինչպես նաև այլ միջոցներով, որոնք արգելված չեն Փոխանցողի գտնվելու երկրի օրենսդրությամբ:

Դրամական փոխանցման վավերապայմանները.

- Փոխանցողի բանկի կողմից Դրամական փոխանցման ընդունման ամսաթիվը և ժամը,
- Նույնականացման համարը,
- Գումարը,
- Արտարժույթի կոդը,
- Փոխանցողի տվյալները, այդ թվում՝ փոխանցողի ազգանունը, անունը, հայրանունը (եթե հայրանունը նշված է անձը հաստատող փաստաթղթում), անձը հաստատող փաստաթղթի տվյալները (սերիան, համարը, երբ է տրված, ում կողմից, քաղաքացիությունը, բնակության վայրը, հաշվառման հասցեն (առկայության դեպքում) ծննդյան թիվը),
- Փոխանցման, վճարման երկիրը,
- Փոխանցողի բանկի տվյալները,
- Ստացողի տվյալները,
- Ստացողի բանկի տվյալները,
- Ստացողի ազգանունը, անունը, հայրանունը (եթե հայրանունը նշված է անձը հաստատող փաստաթղթում),
- Փոխանցման անդորրագրերի դարձերեսին նշվում է նաև Համակարգի անվանումն կամ նույնականացուցիչները,
- Համակարգի տեխնոլոգիային համապատասխան այլ վավերապայմաններ:

«Կոնվերս Տրանսֆեր» Համակարգ (Համակարգ) – իրավաբանական անձանց, ծրագրային-ապարատային կոմպլեքսների, տեխնոլոգիական գործընթացների ամբողջություն, որոնք առաջանում են Համակարգով գործառնություններ իրականացնելու ընթացքում, գործարքների հաշվարկներ իրականացնելիս ըստ նորմատիվային փաստաթղթերի, որոնք կարգավորում են Համակարգի մասնակիցների միջև փոխհարաբերությունները, Համակարգի աշխատանքի կարգը և պայմանները:

Ելքագրվող միջնորդավճար – փոխհատուցում, որը ենթակա է վճարման Փոխանցողի բանկի կողմից Ստացողի բանկին և Օպերատորին:

Միջնորդավճար (Վճար) – վճար, որը Փոխանցողի բանկը գանձում է Փոխանցողից՝ Դրամական փոխանցման դիմաց:

Փոխանցող – անձ, որն իրավունք ունի Դրամական փոխանցում կատարել Փոխանցողի երկրի օրենսդրության համաձայն, որը Փոխանցողի Բանկին հանձնարարում է իրականացնել Դրամական փոխանցումը:

Փոխանցվող գումար – դրամական փոխանցման հանձնարարականում նշված և Փոխանցողի բանկի կողմից ընդունված դրամական միջոցներ, որոնք կարող են լինել Համակարգի կանոններով սահմանված ցանկացած արժույթով:

Ստացող – ֆիզիկական անձ, որը հանդիսանում է Դրամական փոխանցումը ստացողը:

Օպերատոր – Համակարգի մասնակից, որը սահմանում է Համակարգի կանոնները, իրականացնում է Փոխանցողի բանկից Ստացողի բանկին Դրամական փոխանցումը, այդ բանկերի միջև տեխնիկական և ինֆորմացիոն համագործակցության ապահովումը և փոխհաշվարկները: Համակարգի օպերատորը հանդիսանում է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ, որը Համակարգի շրջանակներում կատարում է նաև հաշվարկային կենտրոնի, Ստացողի բանկի, Փոխանցողի բանկի գործառույթները: Համակարգի օպերատորը սույն Կանոնակարգով սահմանված գործառույթների մի մասը կարող է պատվիրակել կամ լիազորել այլ կազմակերպությունների՝ բացառությամբ Համակարգի գործունեության կանոնակարգի, այդ թվում նաև՝ սույն կանոնների, դրանում փոփոխությունների իրականացման հաստատման, պրոցեսինգի և քլիրնգի իրականացման ապահովման գործառույթների:

Օպերատորը պատասխանատու է Համակարգի բնականոն գործունեության և զարգացման համար և ինքն է իրականացնում քլիրնգ և պրոցեսինգ: Համակարգի օպերատոր «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն պարտավոր է պահպանել ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի՝ ոլորտը կարգավորող, որոշումներով նախատեսված սահմանափակումները:

Մասնակից – Համակարգի մասնակից բանկ կամ դրամական փոխանցումներ իրականացնելու թույլտվություն ունեցող կազմակերպություն, որը պայմանագիր է կնքել Օպերատորի հետ՝ դրամական փոխանցումների փոխանցման և վճարման մասին և իրականացնում է դրանք, հանդիսանում է հաշվարկների մասնակից: Մասնակցի իրավունքներն ու պարտականություններն սկիզբ են առնում Օպերատորի և Մասնակցի միջև պայմանագրային հարաբերությունների ծագման պահից: Պայմանագրային հարաբերություններն ապահովում են փոխհաշվարկների և Դրամական փոխանցումների կատարումը՝ Կանոնակարգի համաձայն: Համակարգում նախատեսվում է Ուղղակի և Անուղղակի մասնակցություն:

- Ուղղակի մասնակցության դեպքում Ուղղակի մասնակիցը Համակարգում մասնակցության վերաբերյալ կնքում է պայմանագիր Օպերատորի հետ և նրա մոտ բացում համապատասխան հաշիվներ փոխհաշվարկների իրականացման համար: Պայմանագրով կարող է նախատեսվել Ուղղակի մասնակցի կողմից Երաշխային գումարի ներդնումը Օպերատորի մոտ: Եթե Երաշխային գումարը հավասար է, կամ ավելին է քան Ուղղակի մասնակցի օրական պարտավորությանը Համակարգին, ապա այս դեպքում Օպերատորի մոտ փոխհաշվարկների համար համապատասխան հաշիվների բացումը պարտադիր չէ և փոխհաշվարկները կարող են կատարվել արտաքին թղթակցային հաշիվների միջոցով:
- Անուղղակի մասնակցության դեպքում, Համակարգով փոխանցումներ և վճարումներ կատարելու համար, Անուղղակի մասնակիցը համապատասխան պայմանագիր կնքում է Ուղղակի մասնակցի հետ: Անուղղակի մասնակիցը փոխհաշվարկներ կատարելու համար Ուղղակի մասնակցի մոտ բացում է հաշիվներ: Համակարգում Անուղղակի մասնակցի

կատարած գործարքների համար պատասխանատվություն կրում է Ուղղակի մասնակիցը: Անուղղակի մասնացի մասնաճյուղերը Համակարգում գրանցվում են որպես Ուղղակի մասնակցի մասնաճյուղեր: Համակարգի ծրագրային ապահովումը թույլ է տալիս Ուղղակի մասնակցին իր մոտ առանձնացնել իր և Անուղղակի մասնակցի մասնաճյուղերին և ձևավորել առանձին հաշվետվություն Անուղղակի մասնակցի հետ փոխհաշվարկներ կատարելու համար:

Մասնաճյուղ – Համակարգում գրանցված բանկի կամ դրամական փոխանցումներ իրականացնելու թույլտվություն ունեցող կազմակերպության տարածքային ստորաբաժանում: Համակարգի շրջանակներում Մասնաճյուղը չի հանդիսանում հաշվարկների մասնակից: Համակարգի շրջանակներում հաշվարկները կատարում է բանկը, կամ դրամական փոխանցումներ իրականացնելու թույլտվություն ունեցող կազմակերպությունը, որը սվյալ Մասնաճյուղը գրանցել է Համակարգում: Մասնաճյուղի գործողությունների համար պատասխանատվություն է կրում բանկը կամ դրամական փոխանցումներ իրականացնելու թույլտվություն ունեցող կազմակերպությունը:

Բանկի օպերատոր – Բանկի կամ դրամական փոխանցումներ իրականացնելու թույլտվություն ունեցող կազմակերպության աշխատակից, որը գրանցված է Համակարգում:

Փոխանցողի Բանկ – Փոխանցողի հանձնարարականը ընդունող և իրականացնող Բանկ, կամ դրամական փոխանցումներ իրականացնելու թույլտվություն ունեցող կազմակերպություն, այդ թվում՝ Դրամական փոխանցումներ իրականացնող իրենց Մասնաճյուղերի միջոցով:

Ստացողի Բանկ – Ստացողին Դրամական փոխանցումը տրամադրող Բանկը, կամ դրամական փոխանցումներ իրականացնելու թույլտվություն ունեցող կազմակերպություն, այդ թվում՝ իր Մասնաճյուղերի միջոցով:

Սահմանաչափ – Օպերատորը Համակարգի յուրաքանչյուր մասնակցի համար սահմանում է Համակարգով փոխանցումների կատարման սահմանաչափ, որի չափը իրական ժամանակում հաշվարկվում է հետևյալ կարգով.

Մասնակցի Երաշխիքային գումար - Մասնակցի կողմից կատարված փոխանցման գումար - Ստացողի բանկին հասանելիք միջնորդավճար - Օպերատորին հասանելիք միջնորդավճար + Մասնակցի կողմից կատարված վճարման գումար + Մասնակցին հասանելիք միջնորդավճար:

Հաստատում (Հավաստագրում) – Օպերատորի կողմից թույլտվության ձևակերպում, որպեսզի Մասնակիցը Փոխանցողից ի կատարումն ընդունի Դրամական փոխանցման հանձնարարականը: Հաջող հաստատման դեպքում՝ Փոխանցողի Համակարգում ունեցած սահմանաչափը Օպերատորը իրական ժամանակում պակասեցնում է փոխանցման գումարը, ինչպես նաև Ստացողի Բանկին և Օպերատորին հասանելիք միջնորդավճարը: Սահմանաչափի բացակայության պայմաններում Համակարգը Մասնակցին հնարավորություն չի տալիս կատարելու փոխանցումը՝ ձևավորելով հաղորդագրություն Մասնակցի միջոցների անբավարարության վերաբերյալ: Այս դեպքում մասնակիցը կարող է դիմել Օպերատորին սահմանաչափի ավելացման խնդրանքով և որպես ապահովություն լրացուցիչ դրամական միջոցներ փոխանցելով Օպերատորի մոտ բացված իր հաշիվներին: Համակարգի Օպերատորը պայմանագրով կարող է տրամադրել Ուղղակի մասնակցին Օպերատորի մոտ բացված հաշվի Ազատ դրամական միջոցների և Երաշխիքային գումարի սահմաններում իր կողմից Համակարգ ներգրաված Անուղղակի մասնակիցների կատարած փոխանցումների և վճարումների թույլտվության ձևակերպման իրավասություն:

Ազատ դրամական միջոցներ – դրամական միջոցներ, որոնք գտնվում են Մասնակցի հաշվի վրա, որը բացվել է Օպերատորի մոտ հաշվարկներ կատարելու համար:

Պարտավորություն – Համակարգի Մասնակցի դրամական պարտավորությունը մյուս Մասնակցի, Օպերատորի նկատմամբ, որն առաջացել է Կանոնակարգի պայմանների համաձայն, ինչպես նաև Համակարգի Մասնակցի պարտավորությունը դրամական միջոցների հաշվեգրման գծով՝ Համակարգի Մասնակիցների դրամական պարտավորությունները կատարելու նպատակով:

Պաշտոնական ծանուցում – գրավոր կամ էլեկտրոնային հաղորդագրության տեսքով փաստաթուղթ՝ հաստատված լիազորված անձի կողմից այն հարցերի գծով, որոնք կապված են Համակարգի շրջանակներում ընթացող աշխատանքների հետ:

Էլեկտրոնային տեղեկատու – պարբերաբար թարմացվող տեղեկատու, որում Օպերատորը թվարկում է Մասնակիցներին, նրանց մասնաճյուղերը, Բանկերը, որոնք Օպերատորի հետ փոխհաշվարկների իրականացման գծով ունեն համապատասխան պայմանագրային հարաբերություններ: Էլեկտրոնային տեղեկատուն հասանելի է Համակարգի օպերատորի կայքում Համակարգից օգտվել ցանկացող բոլոր հաճախորդների համար:

Համաձայնեցված կապուղի՝ Տեղեկատվության փոխանակման և հաշվարկների համար Համակարգի Օպերատորի և Մասնակցի կողմից սահմանված կապի միջոցներ և եղանակներ:

Երաշխիքային գումար (Կանխավճար)՝ Համակարգի շրջանակներում փոխանցումները իրականացնելու համար Մասնակցի կողմից տրված երաշխիքային գումարը, որի սահմաններում Մասնակիցը կարող է Համակարգով իրականացնել դրամական միջոցների փոխանցում և որը Համակարգի Օպերատորը կարող է օգտագործել Համակարգում վերջնահաշվարկ իրականացնելու համար:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Կանոնակարգը հաստատվում է Համակարգի օպերատորի կողմից՝ «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ օրենսդրության համաձայն և կանխորոշում և կարգավորում են նույն Համակարգի օպերատորի և Մասնակիցների միջև կնքվող մասնակցության և/կամ համագործակցության պայմանագրի հիմնական դրույթները :

1.2. Համակարգի Կանոնակարգում սահմանված դրույթների պահպանման նկատմամբ հսկողությունը իրականացնում է Համակարգի օպերատորը՝ Համակարգի կետերի արտագնա ստուգումների անցկացման, Համակարգի Մասնակիցների և նրանց ֆիզիկական անձ հաճախորդների դիմումների ընդունման և մշակման կազմակերպման միջոցով: Համակարգի կանոնների պահպանումը պարտադիր է Համակարգի մասնակիցների կողմից և դրանց չպահպանումը հանդիսանում է Համակարգում մասնակցության դադարեցման հիմք: Համակարգը թույլ է տալիս կազմակերպել Դրամական փոխանցումների ընդունումը, ինչպես նաև ապահովում է Մասնակիցների կողմից Կանոնակարգի համաձայն կատարված Դրամական փոխանցումների վերաբերյալ տեղեկատվության հավաքումը, մշակումը և փոխանցումը:

1.3. Համակարգի կանոնակարգում սահմանված դրույթների մեկնաբանությունը իրականացվում է ՀՀ գործող օրենսդրության շրջանակներում:

1.4. Կանոնակարգը և դրա հետագա փոփոխությունները հրապարակվում են Համակարգի Օպերատորի պաշտոնական կայքում (www.conversebank.am):

2. ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1. Դրամական փոխանցման ընդունման և հանձնման ձևակերպումը, յուրաքանչյուր բանկի կամ դրամական փոխանցումներ իրականացնելու թույլտվություն ունեցող կազմակերպության կողմից

կատարվում է Կանոնակարգին համապատասխան՝ ՀՀ օրենսդրության շրջանակներում : ինչպես նաև բանկի կամ դրամական փոխանցումներ իրականացնելու թույլտվություն ունեցող կազմակերպության և նրանց Մասնաճյուղերի գտնվելու երկրի օրենսդրության դրույթները հաշվի առնելով՝ օրենսդրական անհամապատասխանությունների դեպքում առավելությունը տրամադրելով ՀՀ օրենսդրությանը Մասնակցի կողմից հաստատված կանոնների և կարգերի համաձայն:

2.2. Դրամական փոխանցումն ընդունելիս տրամադրվում է նույնականացման համար, որը Համակարգի կողմից ձևավորվում է ավտոմատ, փոխանցման վավերապայմանները Համակարգ մուտքագրելուց հետո:

2.3. Դրամական փոխանցման ընդունումը, Փոխանցողի կողմից դրա հետևանչումը և հանձնումը Ստացողին կատարվում է Փոխանցողի/Ստացողի անձը հաստատող փաստաթուղթը ներկայացնելուն պես՝ Փոխանցողի կամ Ստացողի Բանկի Մասնաճյուղի գտնվելու վայրի գործող օրենսդրության համաձայն, կամ պատշաճ կերպով ձևակերպված լիազորագրի հիման վրա, եթե Մասնակցին դիմում է Փոխանցողի/Ստացողի կողմից լիազորված ներկայացուցիչը, ինչպես նաև ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի հիման վրա՝ Փոխանցողի կամ Ստացողի Բանկի Մասնաճյուղի գտնվելու վայրի գործող օրենսդրության համաձայն:

2.4. Դրամական փոխանցման կատարման համար անհրաժեշտ դրամական միջոցները Փոխանցողի կողմից կանխիկ մուտքագրվում են Փոխանցողի Բանկի կամ Փոխանցողի Բանկի Մասնաճյուղի դրամարկո, կամ անկանխիկ եղանակով ելքագրվում են Փոխանցողի բանկում բացված Փոխանցողի ընթացիկ հաշվից:

2.5. Ստացողի Դրամական միջոցները վճարվում են Ստացողին՝ Ստացողի Բանկի կամ Ստացողի Բանկի Մասնաճյուղի դրամարկոյից, և/կամ ՀՀ օրենսդրությամբ, կամ Մասնակցի գտնվելու երկրի օրենսդրությամբ չարգելված այլ եղանակով:

2.6. Մեկ Դրամական փոխանցման առավելագույն գումարը կազմում է 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ, կամ 600 000 (վեց հարյուր հազար) ռուբլի, կամ 10 000 (տաս հազար) ԱՄՆ դոլար, կամ 10 000 (տաս հազար) Եվրո, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

2.7. Կանոնակարգի 2.6 կետում նշված Դրամական փոխանցման առավելագույն գումարը կարող է նվազեցվել Դրամական փոխանցումը ստանալու երկրի օրենսդրության համաձայն:

2.8. Դրամական փոխանցում ընդունելիս կատարվում է փոխանցվող գումարի հաստատման գործողությունը: Հաստատված գումարն իրենից ներկայացնում է Դրամական փոխանցման գումարը և ելքային միջնորդավճարը:

2.9. Փոխանցողի Բանկի Մասնաճյուղը Փոխանցողին հայտնում է Դրամական Փոխանցման նույնականացման համարը և տրամադրում է համապատասխան փաստաթուղթ, որտեղ նշված են Դրամական փոխանցման վավերապայմանները, ինչպես նաև Դրամական փոխանցումը կատարելու համար Փոխանցողի Բանկին տրվող վճարի չափը:

2.10. Դրամական Փոխանցումը համարվում է ընդունված այն պահից, երբ Փոխանցողի Բանկը հաստատում է Դրամական փոխանցման վճարումը Փոխանցողի կողմից և տեղադրում համապատասխան տեղեկատվությունը Համակարգում: Տվյալ փոխանցումը Համակարգում հասանելի է դառնում ստացողին մինչև 10 րոպեի ընթացքում:

2.11. Փոխանցողը պարտավոր է ժամանակին տեղեկացնել Ստացողին Դրամական փոխանցման ուղարկման մասին:

2.12. Փոխանցողի Բանկի Մասնաճյուղը իրականացնում է Փոխանցողից դրամական միջոցների ընդունումը: Դրամական փոխանցումը համարվում է ընդունված ի կատարում Փոխանցողի կողմից Փոխանցողի Բանկի Մասնաճյուղ Դրամական փոխանցման գումարը մուտքագրելու պահից:

2.13. Փոխանցողի Բանկը կազմում է Պաշտոնական Ծանուցում Օպերատորի համար, որում հաստատում է Դրամական փոխանցման ընդունումն ի կատարում (կարգավիճակը՝ «Պատրաստ է վճարման»): Պաշտոնական Ծանուցումը Համակարգի կողմից գեներացվում է ավտոմատ՝ Փոխանցողի Բանկի օպերատորի կողմից Փոխանցումը Համակարգում հաստատելուց անմիջապես հետո:

2.14. Փոխանցողի կողմից Դրամական փոխանցման ընդունումը կատարվում է Փոխանցողի Բանկի Մասնաճյուղում Կանոնակարգի համաձայն, Փոխանցողի դիմումի և այն փաստաթղթերի հիման վրա, որոնք Փոխանցողը ներկայացնում է Փոխանցողի Բանկի Մասնաճյուղի գտնվելու վայրի գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:

Օպերատորն իրավասու է արգելափակել Դրամական փոխանցման հանձնումը ոչ ավելին, քան մեկ ժամ՝ ստուգելու համար, թե փոխանցումը կատարելիս որքանով են պահպանվել Կանոնակարգի դրույթները: Այն դեպքում, եթե Դրամական փոխանցումը կատարվել է Կանոնակարգի դրույթների խախտումով, փոխանցված գումարը կարող է չվճարվել Ստացողին:

2.15. Դրամական փոխանցման վճարումը Ստացողին կատարվում է Ստացողի Բանկի Մասնաճյուղի կողմից Ստացողի դիմումի և անձը հաստատող փաստաթղթի հիման վրա՝ Կանոնակարգին և Ստացողի Բանկի Մասնաճյուղի գտնվելու վայրի գործող օրենսդրության համապատասխան: Դրամական փոխանցումը ստանալու համար Ստացողը դիմում է Ստացողի Բանկի Մասնաճյուղ: Փոխանցողը պարտավոր է Ստացողին ժամանակին տեղեկացնել Դրամական փոխանցման փաստի և Ստացողի Բանկի Մասնաճյուղի հասցեի մասին:

2.16. Դրամական փոխանցման տրամադրումը կատարվում է անձամբ Ստացողին կամ լիազորագրի հիման վրա նրա ներկայացուցչին (վստահված անձին) հետևյալ պայմանով.

- Ստացողի ազգանունը, անունը, հայրանունը (եթե նշված են անձը հաստատող փաստաթղթում) պետք է խստորեն համապատասխանեն այն տվյալների հետ, որոնք գրանցված են Համակարգում՝ հաշվի առնելով այն առանձնահատկությունները, որոնք նախատեսված են Կանոնակարգի անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 1-ում:
- Ստացողի կողմից նշված Դրամական փոխանցման նույնականացման համարը պետք է համապատասխանի տվյալ Ստացողի համար Համակարգում գրանցված համարին:

2.17. Ստացողի Բանկը Օպերատորի համար կազմում է Պաշտոնական Ծանուցում, որը հաստատում է Դրամական փոխանցման գումարի վճարումը Ստացողին: Պաշտոնական Ծանուցումը Համակարգի կողմից գեներացվում է ավտոմատ՝ Ստացողի Բանկի օպերատորի կողմից Վճարումը Համակարգում հաստատելուց անմիջապես հետո:

2.18. Դրամական փոխանցման վճարումը կատարված է համարվում Ստացողի Բանկի կողմից այն պահից, երբ Օպերատորը Ստացողի Բանկից ստանում է համապատասխան Պաշտոնական Ծանուցում: Դրամական փոխանցման ստացման մասին տեղեկությունը հասանելի է Փոխանցողի Բանկին՝ Համակարգի իրական ժամանակի ռեժիմում:

2.19. Ստացողի Բանկն իրավուք ունի մերժել վճարումը և պատասխանատվություն չի կրում Դրամական փոխանցումը չվճարելու համար, եթե չեն պահպանվել Կանոնակարգի 2.16 կետի պահանջները:

2.20. Փոխանցողն իրավունք ունի ցանկացած ժամանակ, սկսած այն պահից, երբ Դրամական փոխանցման հանձնարարականն ընդունվել է ի կատարում, մինչև դրա կատարումը կամ Ստացողի կողմից դրամական միջոցների ստացումը, հետ կանչել փոխանցման հանձնարարականը: Դրամական փոխանցման կարգավիճակի մասին տեղեկությունը հասանելի է Համակարգի մասնակիցներին՝ իրական ժամանակի ռեժիմում:

2.21. Դրամական փոխանցման հետ կանչը հնարավոր է միայն մինչև դրա կատարումը, իրականացվում է անձամբ Փոխանցողի կամ նրա ներկայացուցչի (վստահված անձի) կողմից Փոխանցողի Բանկի Մասնաճյուղի միջոցով Փոխանցողի (նրա ներկայացուցչի) դիմումի ն/կամ Փոխանցողի (նրա ներկայացուցչի) անձը հաստատող փաստաթղթի հիման վրա՝ Կանոնակարգին և Ստացողի Բանկի Մասնաճյուղի գտնվելու վայրի գործող օրենսդրությանը համապատասխան:

2.22. Փոխանցողի Բանկը Օպերատորի համար կազմում է Պաշտոնական Ծանուցում, որը հաստատում է Փոխանցողին Փոխանցողի Բանկի Մասնաճյուղի դրամարկղից Դրամական փոխանցման գումարի և միջնորդավճարի վերադարձը, եթե Փոխանցողի Բանկը որոշում է կայացնում այն վերադարձնելու մասին:

2.23. Պաշտոնական Ծանուցումը Համակարգի կողմից գեներացվում է ավտոմատ՝ Փոխանցողի Բանկի օպերատորի կողմից Փոխանցման և միջնորդավճարի վերադարձը Համակարգում հաստատելուց անմիջապես հետո:

2.24. Դրամական փոխանցումը համարվում է հետ կանչված՝ Օպերատորի կողմից Փոխանցողի բանկ Պաշտոնական ծանուցումը ստանալու պահից: Դրամական փոխանցման հետ կանչման մասին տեղեկությունը հասանելի է Ստացողի Բանկին՝ Համակարգի իրական ժամանակի ռեժիմում:

2.25. Դրամական փոխանցման վավերականության ժամկետը (այն ժամկետը, որի ընթացքում փոխանցման գումարը կարող է ստացվել Ստացողի կողմից, հետ կանչվել Փոխանցողի կողմից այն դեպքում, եթե չի կատարվել) կազմում է 60 (վաթսուն) օրացուցային օր՝ Դրամական փոխանցման հանձնարարականն ի կատարում ընդունվելու օրվանից:

2.26. Այն դեպքում, եթե Դրամական փոխանցման վավերականության ժամկետը լրանալուց հետո Ստացողը չի ստացել փոխանցված գումարը կամ էլ գումարը հետ չի կանչվել Փոխանցողի Բանկի Մասնաճյուղի կողմից, ապա այդպիսի դրամական փոխանցումը Համակարգում հասանելի է միայն Փոխանցողի Բանկին: Դրամական փոխանցումների վավերականության ժամկետը լրացած փոխանցումների վերաբերյալ, վավերականության ժամկետի լրացման հաջորդ օրը, Համակարգի օպերատորը տեղեկացնում է Փոխանցողի Բանկին այդպիսի փոխանցման առկայության վերաբերյալ և խնդրում որպեսզի տեղեկացնեն փոխանցողին Դրամական փոխանցման հետևանք կատարելու համար:

2.27. Դրամական փոխանցման հետ կանչը Փոխանցողի կողմից կատարվում է Փոխանցողի Բանկի Մասնաճյուղի միջոցով՝ Կանոնակարգի 2.21-2.24 կետերի համաձայն:

2.28. Դրամական փոխանցման հետ կանչի կամ չեղյալացման դեպքում լրացուցիչ միջնորդավճար չի գանձվում, մինչև ժամանակ ետ է վերադարձվում Փոխանցողի Բանկի էլքային մջնորդավճարը:

3. ՓՈՒՄԱՆՑԱՆ ՎՃԱՐԸ (ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐ)

3.1. Դրամական փոխանցումը կատարելու համար Փոխանցողի Բանկը Փոխանցողից հանձնարարականն ընդունելու պահին գանձում է Փոխանցման վճար/Միջնորդավճար/՝ հաստատված Սակագներին համապատասխան: Միջնորդավճարի չափը սահմանվում է

Համակարգի օպերատորի կողմից և հրապարկվում է Օպերատորի պաշտոնական ինտերնետային կայքում հետևյալ հասցեով՝ www.conversebank.am: Դրամական փոխանցման ուղարկման համար Ուղարկողից գանձվող Միջնորդավճարը բաշխվում է Ուղարկող բանկի, Համակարգի օպերատորի և Ստացող բանկի միջև:

3.2. Միջնորդավճարի բաշխման արդյունքում Համակարգի օպերատորին և Մասնակցին հասանելիք մասնաբաժինների չափը և բաշխման կարգը սահմանվում է Համակարգի օպերատորի և Մասնակցի միջև կնքված պայմանագրով:

3.3. Դրամական փոխանցման գումարը տրամադրելիս Ստացողի բանկը Ստացողից լրացուցիչ միջնորդավճար չի գանձում:

3.4. Ստացողի բանկին միջնորդավճար վճարվում է Օպերատորի կողմից Օպերատորի պարտավորությունների հաշվից հաշվետու օրվան հաջորդող աշխատանքային օրը:

3.5. Հաճախորդից գանձվող Միջնորդավճարի չափը սահմանվում է Համակարգի Օպերատորի կողմից և արձանագրվում Համակարգի սակագներում: Համակարգի սակագների, ինչպես նաև առանձնահատկությունների և գոյություն ունեցող սահմանափակումների վերաբերյալ տեղեկատվությունը զետեղվում է Համակարգի Օպերատորի պաշտոնական կայքում:

3.6. Միջնորդավճարը հաշվարկվում և գանձվում է ամբողջ ծավալով Փոխանցողի բանկի կողմից: ՀՀ տարածքում միջնորդավճարը գանձվում է ՀՀ դրամով:

3.7. Միջնորդավճարների բաշխումը կատարվում է յուրաքանչյուր աշխատանքային օր՝ Համակարգում կատարվող վերջնահաշվարկի ժամանակ, եթե Համակարգի Օպերատորի և կոնկրետ Մասնակցի միջև կնքված պայմանագրով Միջնորդավճարների վճարման այլ կարգ նախատեսված չէ:

3.8. Միջնորդավճարի գումարը կարող է արտահայտված լինել.

- Տոկոսային հարաբերությամբ փոխանցման գումարի նկատմամբ,
- Տոկոսային հարաբերությամբ փոխանցման գումարի նկատմամբ՝ գումարած ֆիքսված գումար,
- Ֆիքսված գումար:

3.9. Համակարգի Օպերատորն իրավունք ունի փոփոխություններ կատարել Համակարգի սակագներում, այդ թվում միակողմանի փոխել Հաճախորդներից գանձվող միջնորդավճարների չափը, վճարային ծառայությունների դիմաց Հաճախորդներին ու Ստացողներին սպասարկելու համար Համակարգի Օպերատորի կողմից Մասնակիցներին վճարվող պարգևատրման չափը:

3.10. Գործողության սահմանափակ ժամկետով Համակարգի սակագների սահմանումը Համակարգի Օպերատորի կողմից չի հանդիսանում սակագների փոփոխության գործողություն: Այդպիսի փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը հասցվում է Մասնակիցներին նախապես: Համակարգի Օպերատորը իրեն իրավունք է վերապահում երկարաձգել կամ սահմանափակել նշված սակագների գործողության ժամկետը անսահմանափակ քանակությամբ:

3.11. Մասնակցի հետ համաձայնեցնելուց հետո Օպերատորն իրավունք ունի Մասնակցի համար միջնորդավճարների գծով անհատական սակագներ սահմանել:

3.12. Օպերատորի և Մասնակցի ծառայությունները չեն հարկվում ԱԱՀ-ով:

3.13. Միջնորդավճարի չափը հաստատվում է Օպերատորի կողմից:

3.14. Համակարգի սակագների և Մասնակիցների միջնորդավճարների փոփոխությունները ուժի մեջ են մտնում Մասնակցին գրավոր կերպով կամ համաձայնեցված կապուղիներով մեկ ամիս առաջ ծանուցելուց հետո առաջիկա աշխատանքային օրը, Երևանի ժամանակով ժամ 00:01րոպեից:

3.15. Համակարգի յուրաքանչյուր Մասնակից և Օպերատորը Միջնորդավճարները ընդունում են որպես Կանոնակարգի անքակտելի մաս: Համակարգի յուրաքանչյուր Մասնակից և Օպերատորը պարտավորվում են անվերապահորեն պահպանել Միջնորդավճարների պայմանները:

4. ՄԻՋԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐ

4.1. Համակարգի միջբանկային հաշվարկները և քլիրինգը իրականացնում է Համակարգի Օպերատորը՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ն:

4.2. Քլիրինգը Համակարգում իրականացվում է Մասնակիցներից կողմից ուղարկված և վճարված փոխանցումների հիման վրա:

4.3. Համակարգում Մասնակիցների նկատմամբ վճարային քլիրինգային դիրքը սահմանվում է նետտո-հիմքով:

4.4. Նետտո հիմքով վճարային քլիրինգային դիրքը սահմանվում է Համակարգի Օպերատորի գործառնական օրվա (գործառնական օրվա սկզբնադրություն է 00:00 մինչև 23:59 Երևանի ժամանակով) ընթացքում Մասնակիցների կողմից ուղարկված փոխանցումների (հաշվի առած պարզևատրման գումարները) և Մասնակիցների կողմից վճարված փոխանցումների (հաշվի առած պարզևատրման գումարները), տարբերության չափով:

4.5. Նետտո-հիմքով վճարային քլիրինգային դիրքի սահմանումից հետո, Համակարգի օպերատորը իրականացնում է համապատասխան վճարային կարգադրություն՝ համաձայն նետտո հաշվարկի հետևյալ կերպ.

[V (Վճարված) + K (պարզևավճար վճարված) + Z (վերադարձված) + K (վերադարձի պարզևավճար)] - [U (ուղարկված) + K (պարզևավճար փոխանց.)], որտեղ

- V (Վճարված)՝ դրամական միջոցներ, որոնք վճարվել են համակարգով;
- K (պարզևավճար վճարված)՝ Վճարված դրամական միջոցների դիմաց վճարող մասնակցին հասանելիք պարզևավճար;
- Z (վերադարձ)՝ համակարգով վճարված և չեղարկված փոխանցումների վերադարձ.
- K (վերադարձի պարզևավճար)՝ Չեղարկված փոխանցումների վերադարձի դեպքում վերադարձվող պարզևավճար
- U (ուղարկված)՝ դրամական միջոցներ, որոնք փոխանցվել են համակարգով;
- K (պարզևավճար փոխանց)՝ Փոխանցված դրամական միջոցներից գանձված փոխանցող մասնակցին հասանելիք պարզևավճար;

4.6. Յուրաքանչյուր աշխատանքային օր Համակարգում քլիրինգը իրականացնելուց հետո Համակարգի Օպերատորը էլեկտրոնային եղանակով յուրաքանչյուր Մասնակցին ուղարկում է տվյալ Մասնակցի քլիրինգային դիրքի մասին հաշվետվություն, որում նաև արտացոլվում է տվյալ մասնակցի Երաշխիքային գումարի մնացորդը (Երաշխիքային գումարի առկայության դեպքում): Հաշվետվություն ձևաչափը համաձայնեցվում է տվյալ Մասնակցի հետ:

4.7. Համակարգում յուրաքանչյուր օր կատարված փոխանցումների համար Համակարգի Մասնակիցների հետ վերջնահաշվարկը կատարվում է հաջորդ աշխատանքային օրը՝ Երևանի ժամանակով մինչև 14:00-ն:

4.8. Վերջնահաշվարկը իրենից ներկայացնում է Համակարգի օպերատորի համապատասխան հաշիվներից դրամական միջոցների ելքագրում և փոխանցում քլիրինգի արդյունքում դրական դիրք ունեցող Մասնակիցներին, տվյալ Մասնակիցների կողմից ներկայացված և իրենց պատկանող

բանկային հաշիվներին: Քլիրինգի արդյունքում բացասական դիրք ունեցող Մասնակիցների գծով Համակարգի Օպերատորի կողմից Համակարգում կատարվում է Երաշխիքային գումարների վերահաշվարկ/ճշգրտում:

4.9. Համակարգում վերջնահաշվարկը իրականացվում է այն արժույթով, որով որ կատարվել են դրամային փոխանցումները:

4.10. Յուրաքանչյուր աշխատանքային օր քլիրինգը կատարելուց հետո Համակարգի Օպերատորի կողմից Համակարգում կատարվում է բոլոր Մասնակիցների գծով հաշվառվող Երաշխիքային գումարների վերահաշվարկ և հաջորդ գործառնական օրվա համար հասանելի սահմանաչափերի ճշգրտում:

4.11. Մասնակիցն ինքնուրույն է հետևում իր Երաշխիքային գումարի մնացորդին և ինքնուրույն է որոշում դրա համալրման չափը և պարբերականությունը:

5. ՀԱՎԱՍՏԱԳՐՈՒՄ

5.1. Համակարգով փոխանցվող գործարքները կատարվում են միայն հավաստագրման դեպքում: Գործարքների հավաստագրումը կարող է իրականացվել նաև Համակարգի Օպերատորի կողմից:

5.2. Գործարքների հավաստագրումն իրականացվում է Մասնակցի սահմանաչափի շրջանակներում, որը գերազանցելու դեպքում տվյալ Մասնակցի գործարքը մերժվում է:

5.3. Մասնակցի սահմանաչափը նրա գուտ դիրքի և տրամադրված Երաշխիքային գումարի հանրագումարն է:

5.4. Մասնակցի գուտ դիրքը հաշվարկվում է Համակարգի Կանոնակարգի 4-րդ բաժնով սահմանված կարգով:

5.5. Համակարգի շրջանակներում փոխանցումները իրականացնելու և վերջնահաշվարկի անխափանությունը ապահովելու համար Մասնակիցները Համակարգի Օպերատորին կարող են տրամադրել Երաշխիքային գումար: Երաշխիքային գումարի չափը որոշվում է Մասնակիցը՝ կախված տվյալ Մասնակցի կողմից կանխատեսվող գործարքների ծավալից և գումարից: Մասնակցի հետ կնքված պայմանագրում կարող են նախատեսվել՝ կախված տվյալ մասնակցի օրական փաստացի գործարքների ծավալից և գումարից, միջանկյալ քլիրինգի մեկից ավելին իրականացման դրույթներ:

5.6. Մասնակցի կողմից Երաշխիքային գումարը վճարվում է Համակարգի Օպերատորի կողմից բացված հաշվարկային կենտրոնում առկա Համակարգի տվյալ Մասնակցի տարանցիկ հաշվին: Մասնակցի կողմից վճարված Երաշխիքային գումարը Համակարգի Օպերատորը իրավունք ունի օգտագործել միայն Համակարգում տվյալ Մասնակցի պարտավորությունների մասով վերջնահաշվարկ իրականացնելու համար:

5.7. Եթե Մասնակիցը Երաշխիքային գումար չի տրամադրել, ապա նա Համակարգով կարող է կատարել դրամական փոխանցումներ միայն տվյալ պահի դրությամբ իր կողմից ստացողներին (շահառուներին) վճարված գումարների չափով:

5.8. Համակարգի շրջանակներում ժամանակի առցանց ռեժիմում յուրաքանչյուր գործարքից հետո կատարվում է Համակարգի Մասնակցի սահմանաչափի ճշգրտում՝ հիմք ընդունելով մինչ այդ կատարված գործարքները. այն է սահմանաչափի մնացորդը ճշգրտվում է գուտ դիրքով հաշվարկված պարտավորությունների հետ, որտեղ ներառվում են բոլոր շարժերը՝ փոխանցումներ, վճարումներ, միջնորդավճարներ:

6. ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6.1. Մասնակիցը պարտավորվում է.

6.1.1. Լրիվ ծավալով և պատշաճորեն կատարել Կանոնակարգով և գործող օրենսդրությամբ Փոխանցողների և Ստացողների, Օպերատորի առջև ստանձնած բոլոր պարտավորությունները:

6.1.2. Ժամանակին և ճիշտ կատարել Դրամական հանձնարարականի գծով դրամական միջոցների ընդունումը/վճարումը:

6.1.3. Համակարգի շրջանակներում կատարված գործարքի մասին տեղեկատվությունը արձանագրել գործարքի կատարման պահին:

6.1.4. Ապահովել Համակարգի շրջանակներում իր կողմից կատարված բոլոր գործարքների մասին տեղեկատվության ճիշտ և ամբողջական ուղարկումը Համակարգ:

6.1.5. Դրամական փոխանցումների ընդունման/տրամադրման կետերում տեղադրել Համակարգում իր մասնակցության հետ կապված տեղեկատվությունը և գովազդային նյութերը:

6.1.6. Տեղեկատվության հասանելիությունն ապահովել իր միայն այն աշխատակիցների համար, որոնք անմիջականորեն կապված են Համակարգում կատարվող աշխատանքների հետ:

6.1.7. Այն դեպքում, երբ առաջացել են այնպիսի հանգամանքներ, որոնք ժամանակավորապես խոչընդոտում են Դրամական փոխանցում ընդունելու կամ վճարելու ծառայության մատուցման աշխատանքներին, անհապաղ այդ մասին տեղեկացնել Օպերատորին՝ նշելով գործունեության դադարեցման և վերսկսման ժամկետները:

6.1.8. Օպերատորին անմիջապես տեղեկացնել այն բոլոր խախտումների մասին, որոնք կատարվել են Համակարգի աշխատանքներում, ինչպես նաև վերջինիս տրամադրել նշված խախտումների հետ կապված բոլոր տվյալները:

6.1.9. Կանոնավոր կերպով ծանոթանալ Համակարգի աշխատանքների մասին տեղեկատվության հետ, այդ թվում՝ Համակարգի աշխատանքներում կատարվող բոլոր փոփոխությունների մասին, որոնք տեղադրվում են www.conversebank.am կայքում:

6.1.10. Ապահովել իր Մասնաճյուղերի կողմից Կանոնակարգի բոլոր պայմանների կատարումը:

6.1.11. Օպերատորի կողմից Մասնակցի ծառայությունների մասին գովազդային նյութերը ստանալուց հետո գովազդային նյութերում Մասնակցի մասին տեղեկատվություն տեղադրել այն ծավալով, որը նախատեսված է ՀՀ գործող օրենսդրությամբ: Հաճախորդներին բանկային ծառայությունների մատուցման գովազդային նյութերի բովանդակության և ձևավորման համար պատասխանատու է Մասնակիցը:

6.1.12. Այն դեպքում, եթե Մասնակիցը ինքնուրույն է պատրաստում և տեղադրում գովազդային-տեղեկատվական նյութերը կամ այլ տեղեկատվություն, ներառյալ Համակարգի կամ դրա գործունեության մասին ցանկացած տպագրանյութ (այդ թվում՝ տպագրված զանգվածային լրատվամիջոցներում), ինչպես նաև Համակարգի ապրանքային նշանն օգտագործելու դեպքում, Մասնակիցը պետք է հրատարակման ենթակա նյութերը և տեքստերը համաձայնեցնի Օպերատորի հետ:

6.2. Մասնակիցն իրավունք ունի.

6.2.1. Սպասարկվել Համակարգում՝ Կանոնակարգին համապատասխան:

6.2.2. Իր գովազդային նյութերում, պայմանագրերում՝ նախօրոք համաձայնեցնելով Օպերատորի հետ, օգտագործել Համակարգի ֆիրմային ոճը, լոգոն:

6.2.3. Մասնակցել Համակարգի աշխատանքներում որպես Փոխանցողի բանկ կամ Ստացողի բանկ:

6.2.4. Փոխել իր մասնաճյուղերի քանակը, որտեղ կատարվում է Դրամական փոխանցումների ընդունում և հանձնում: Մասնակիցը պարտավոր է Օպերատորին ամբողջական և ճշգրիտ տեղեկատվություն տրամադրել այդ փոփոխությունների մասին, ներառյալ այն ժամանակահատվածի, որի ընթացքում ընդունվում և հանձնվում են Դրամական փոխանցումները: Տեղեկատվությունը պետք է տրամադրվի գրավոր ձևով ոչ ուշ քան նման փոփոխություններ կատարելուց 2 (երկու) շաբաթ առաջ:

6.2.5. Ցանկացած պահի հրաժարվել Համակարգի մասնակցությունից և միակողմանիորեն լուծել Պայմանագիրը՝ այդ մասին գրավոր կերպով ծանուցելով Օպերատորին ոչ ուշ, քան Պայմանագրի լուծման ժամկետից 30 (երեսուն) օրացուցային օր առաջ:

6.2.6. Մասնակցի կողմից ծանուցման ստանալու օրվանից 10 (տասը) օրացուցային օր հետո Օպերատորը դադարեցնում է Մասնակցի աշխատանքը որպես Փոխանցողի բանկ և Դրամական փոխանցումներ իրականացնելու հնարավորությունը, իսկ Մասնակցի կողմից ծանուցման իրականացման օրվանից 30 (երեսուն) օրացուցային օր հետո Օպերատորը դադարեցնում է Մասնակցի աշխատանքը որպես Ստացողի բանկ և Դրամական փոխանցումներ վճարելու հնարավորությունը:

Ուշադրություն. Նման Մասնակցի կողմից ընդունված, բայց Պայմանագրի դադարեցման ժամկետին չտրամադրված Դրամական փոխանցումները, ինչպես նաև տվյալ փոխանցումների հետ կապված Օպերատորի և Ստացողի բանկի միջնորդավճարները, դուրս են գրվում Օպերատորի կողմից՝ Համակարգի շրջանակներում դրանց հետագա վճարման հնարավորությամբ:

6.3. Օպերատորը պարտավոր է.

6.3.1. Ներգրավել Մասնակիցներին Համակարգ և ապահովել դրանց տեղեկատվական և տեխնիկական սպասարկումը:

6.3.2. Ապահովել Համակարգի շրջանակներում կատարված գործարքների մասին ողջ տեղեկատվության պահպանումը 5 (հինգ) տարվա ընթացքում՝ սկսած համապատասխան գործարքի իրականացման օրվանից:

6.3.3. Համակարգի շրջանակներում աշխատելու ողջ ժամանակահատվածի ընթացքում Մասնակիցների համար ապահովել Համակարգ մուտք գործելու հնարավորություն այն պայմանով, որ Մասնակիցների պատշաճորեն կիրականացնեն Կանոնակարգի պահանջները, Պայմանագրի պայմանները, ինչպես նաև Մասնակիցների կողմից վճարումները կիրականացվեն ժամանակին և ամբողջությամբ:

6.3.4. Օպերատորի կողմից գովազդային-տեղեկատվական նյութեր պատրաստելիս և տեղադրելիս օգտագործել Մասնակցի տվյալ պահին գործող ապրանքային նշանը: Մասնակցի գործունեության մասին ցանկացած տեղեկատվություն, ներառյալ հրապարակված (այդ թվում՝ զանգվածային լրատվամիջոցներում), տեղադրելուց առաջ դրանք համաձայնեցնել Մասնակցի հետ:

6.3.5. Օպերատորը պատասխանատու է համակարգի բնականոն, անխափան աշխատանքի, փոխհաշվարկների ճշտության և սահմանված ժամկետում կատարման համար:

6.3.6. Անհրաժեշտության դեպքում կատարել պլանային պրոֆիլակտիկ աշխատանքներ, կապված Համակարգի աշխատանքների ժամանակավոր դադարեցման հետ՝ այդ մասին Համակարգի միջոցով մեկ օր առաջ նախապես զգուշացնելով Մասնակցին՝ վերջինիս էլեկտրոնային հասցեով համապատասխան գրություն ուղարկելու միջոցով:

6.3.7. Օպերատորը պարտավոր է առնվազն տարին մեկ անգամ հրապարակել համակարգի գործունեության վերաբերյալ տեղեկությունները (այդ թվում՝ մասնակիցների, գործառնությունների տեսակների, նախորդ տարվա ընթացքում կատարված գործառնությունների ծավալի և քանակի վերաբերյալ) պաշտոնական ինտերնետային կայքում (www.conversebank.am)

6.4. Օպերատորն իրավունք ունի.

6.4.1. Համակարգի աշխատանքների մեջ ներգրավել իր կողմից լիազորված կազմակերպություններին՝ Մասնակցի տեղեկատվական և տեխնիկական սպասարկումն ապահովելու համար:

6.4.2. Մասնակիցներին տրամադրել գովազդային նյութեր՝ կողմերի միջև կնքված լրացուցիչ համաձայնագրերի և նրանց դիմումների հիման վրա:

6.4.3. Դադարեցնել Մասնակցի աշխատանքը Համակարգի շրջանակներում, եթե Մասնակիցը կամ նրա մասնաճյուղը խախտեն Կանոնակարգի պայմանները: Սպասարկումը դադարեցնելուց առաջ Օպերատորը պարտավոր է Մասնակցին պաշտոնապես ծանուցել այդ մասին առնվազն 3 (երեք) աշխատանքային օր առաջ: Մասնակցի սպասարկումը դադարեցվում է, եթե խախտումը հայտնաբերելուց և Պաշտոնական ծանուցումը ստանալուց հետո Մասնակիցը 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում չի վերացնում այդ խախտումը: Մասնակցի սպասարկումը վերսկսվում է բոլոր խախտումները վերացնելուց և վերջինիս կողմից Օպերատորի առջև ստանձնած պարտավորություններն ամբողջությամբ կատարելուց հետո՝ ոչ ուշ, քան 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում:

6.4.4. Այն դեպքում, եթե Մասնակիցը սպասարկումը դադարեցնելուց հետո 20 (քսան) օրվա ընթացքում չի կարողանում վերացնել խախտումները, Օպերատորն իրավունք ունի միակողմանիորեն լուծել Մասնակցի հետ կնքված պայմանագրային հարաբերությունները և նրան հասցեագրել համապատասխան գրավոր ծանուցում ոչ ուշ, քան Պայմանագրի լուծումից 10 (տասը) օրացուցային օր առաջ:

6.4.5. Ցանկացած պահի, միակողմանիորեն դադարեցնել ցանկացած Մասնակցի մասնակցությունը Համակարգում՝ այդ մասին վերջինիս գրավոր տեղեկացնելով առնվազն 30 (երեսուն) օրացուցային օր առաջ:

6.4.6. Օպերատորի կողմից Մասնակցին ծանուցում ուղարկելուց 10 (տասը) օրացուցային օր հետո Օպերատորը դադարեցնում է Մասնակցի հնարավորությունը աշխատել որպես Փոխանցողի բանկ և իրականացնել Դրամական փոխանցումներ իսկ Մասնակցի կողմից ծանուցման ստանալու օրվանից 20 (քսան) օրացուցային օր հետո Օպերատորը դադարեցնում է Մասնակցի աշխատանքը որպես Ստացողի բանկ և Դրամական փոխանցումներ վճարելու հնարավորությունը:

Ուշադրություն. Նման Մասնակցի կողմից ընդունված, բայց Պայմանագրի դադարեցման ժամկետին չտրամադրված Դրամական փոխանցումները, ինչպես նաև տվյալ փոխանցումների հետ կապված Օպերատորի և Ստացողի բանկի միջնորդավճարները, դուրս են գրվում Օպերատորի կողմից՝ Համակարգի շրջանակներում դրանց հետագա հանձնման հնարավորությամբ:

7. ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

7.1. Համակարգին մասնակցության պայմանագրի կնքման համար մասնակցության թեկնածուն պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին՝

- Ընդհանուր ֆինանսական կայունություն,
- Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցների իրականացում,
- Գործառնությունների կատարման պահին կիրառվող Համակարգի տեխնիկական պահանջներին համապատասխան աշխատելու հնարավորության ապահովում,
- Դրամական միջոցների փոխանցման գործունեության իրականացման անհրաժեշտ լիցենզիաների (թույլտվությունների) առկայությունը՝ Մասնակցի գտնվելու երկրի օրենսդրության պահանջներին համապատասխան,
- Սեփական կորպորատիվ ցանցում տեղեկատվության պաշտպանության ապահովումը, այդ թվում Համակարգում աշխատելիս,
- Միացման տեխնիկա-սարքավորումային պատրաստվածություն,
- Բանկային և առևտրային գաղտնիքի ապահովումը:

7.2. Համակարգին մասնակցությունը սկսվում է Համակարգի Օպերատորի հետ մասնակցության պայմանագիր կնքելուց և սպասարկման կետերը Համակարգում գրանցելուց հետո:

7.3. Մասնակցի՝ Համակարգին միացումը իրականացվում է Համակարգի Օպերատորի հետ համակարգին մասնակցության պայմանագրի կնքման և Համակարգի կանոնակարգով սահմանված դրույթները ամբողջությամբ ընդունելու միջոցով:

7.4. Մասնակիցների միացումը Համակարգին կատարվում է «Կոնվերս Տրանսֆեր» համակարգի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության կարգով սահմանված դրույթներին համապատասխան:

7.5. Համակարգին միանալն անվճար է:

8. ՀԱՃԱԽՈՂՂՆԵՐԻ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՄԱՆ ԵՎ ԱՐՉԱԳԱՆՔՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. Համակարգի օպերատորին ուղղված հաճախորդների բողոքները ընդունվում և ընթացք են տրվում ՀՀ օրենքներով, ՀՀ ԿԲ նորմատիվ և Համակարգի օպերատորի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով:

8.2. Հաճախորդների դիմում-բողոքները ընդունվում են Համակարգի օպերատորի Գլխավոր գրասենյակում՝ 0010, Վազգեն Սարգսյան 26/1 հասցեում առձեռն կամ փոստային ծառայության միջոցով, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով Համակարգի conversetransfer@conversebank.am էլեկտրոնային հասցեի միջոցով:

8.3. Դիմում-բողոքները քննարկվում են և պատասխանները Հաճախորդներին ուղարկվում են դիմումները մուտք լինելու օրվանից 10-օրյա (տասնօրյա) ժամկետում: Դիմում-բողոքին ընթացք տալու համար ստուգում կատարելու, լրացուցիչ նյութեր պահանջելու կամ այլ միջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության դեպքում Համակարգի Օպերատորը կարող է երկարաձգել դիմում-բողոքի քննարկման ժամկետը, բայց ոչ ավելին, քան սահմանված ժամկետից 10 (տաս) օրով՝ այդ մասին նախօրոք տեղյակ պահելով դիմումատուին:

8.4. Դիմումի պատասխանը փոստային կապի միջոցով ուղարկվում կամ առձեռն տրվում է հաճախորդին: Էլեկտրոնային հասցեի առկայության դեպքում դիմումի պատասխանը լրացուցիչ ուղարկվում է նաև էլեկտրոնային հասցեով: Դիմումի պատասխանում նշվում է նաև տեղեկատվություն այն մասին, որ դիմում-բողոքի գրավոր պատասխանով բավարարված չլինելու

դեպքում հաճախորդն իր իրավունքները պաշտպանելու համար կարող է դիմել դատարան կամ Ֆինանսական համակարգի հաշտարարին կամ ՀՀ Կենտրոնական բանկ:

8.5. Դիմումները ներկայացվում են Համակարգի օպերատորի գործադիր մարմնի ղեկավարի անունով, անվանական, պարտադիր ստորագրվում են՝ նշելով դիմումատուի հետ հետադարձ կապի տվյալները (հաճախորդի անուն, ազգանուն, հասցե, հեռախոսահամար, կապի այլ միջոցներ),

8.6. Անանուն և կեղծ տվյալներով դիմումները չեն դիտարկվում:

8.7. Սահմանված դրույթների խախտման համար պատասխանատու անձինք ենթարկվում են պատասխանատվության ՀՀ օրենսդրության և Համակարգի օպերատորի ներքին կարգերին համապատասխան:

9. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

9.1. Համակարգի Օպերատորն ապահովում է Համակարգի հուսալիությունը: Համակարգում ռիսկերի գնահատման և կառավարման գործառնությունները բաշխվում են Համակարգի Օպերատորի և Մասնակիցների միջև: Ռիսկերի կառավարման համակարգը ենթադրում է Համակարգի անխափան գործարկման համար անբարենպաստ հետևանքների առաջացման հավանականության նվազեցման միջոցառումներ, համալիր քայլեր և եղանակներ:

9.2. Համակարգի ռիսկերի կառավարման գործունեության կազմակերպման համար Համակարգի Օպերատորը մշակում և հաստատում է Համակարգի ռիսկերի կառավարման ոլորտի ներքին փաստաթղթեր, որոնք պարունակում են են ռիսկերի կառավարման սկզբունքները, ինչպես նաև բովանդակում են ռիսկերի կառավարման միջոցառումներ և եղանակներ:

9.3. Ներքին փաստաթղթերը մշակվում են Համակարգի Օպերատորի կողմից՝ ՀՀ Կենտրոնական Բանկի գործող նորմատիվային ակտերի պահանջներին համապատասխան և սահմանում են Կոնվերս Տրանսֆեր համակարգում ռիսկերի կառավարման համակարգը՝ ներառելով ռիսկերի կառավարման համակարգի կազմակերպումը, Մասնակիցների կողմից ռիսկերի կառավարման պահանջների կատարման նկատմամբ հսկողությունն ապահովող անձանց/ստորաբաժանումների գործառնությամբ պարտականությունների բաշխումը, տեղեկատվության փոխանակման և համագործակցության կարգը, որն անհրաժեշտ է ռիսկերի կառավարման համար: Տվյալ փաստաթղթերը կարող են Համակարգի Օպերատորի կողմից որպես ի գիտություն առանձին տրվել Մասնակիցներին:

9.4. Մասնակիցներն ինքնուրույն են իրականացնում ռիսկերի կառավարումը, որոնք բնորոշ են իրենց գործունեության տեսակին և պատասխանատվություն են կրում նշված ռիսկերի իրացման հետևանքների համար:

9.5. Համակարգի Օպերատորը Համակարգի անխափան գործունեության ապահովման գծով Համակարգի Մասնակիցների գործունեությունը համակարգում է սույն Կանոնակարգի պահանջների և դրանց կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման միջոցով՝ ներառյալ համաձայնեցված կապուլիների սահմանումը, ինչպես նաև գործառնությունների մոնիթորինգի իրականացումը, Համակարգի համապատասխան մասնակիցների գործունեությանը վերաբերվող արդյունքների վերահսկումը:

9.6. Համակարգի Օպերատորը վերահսկողություն է իրականացնում Համակարգի մասնակիցների կողմից Համակարգի անխափան գործունեության ապահովման և Համակարգի Կանոնակարգով սահմանված դրույթների պահպանման նկատմամբ՝ մասնագիտացված արտագնա ստուգումների

միջոցով և/կամ վերոնշյալ հսկողության իրականացման համար Համակարգի Մասնակիցներից ստացված անհրաժեշտ տեղեկատվության միջոցով:

9.7. Համակարգի անխափան գործունեության ապահովման համար Համակարգի Օպերատորն իրականացնում է՝

- Դրամական միջոցների փոխանցման վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և պահպանում համակարգում,
- Մասնակիցների վճարային դիրքերի և վերջնահաշվարկների մասին տեղեկատվության հաշվառումն ապահովող գործառնական և տեխնոլոգիական միջոցների, սարքերի, տեղեկատվական համակարգերի շահագործման խափանումները թույլ չտալուն ուղղված միջոցներ, իսկ նշված խափանումների առաջացման դեպքում՝ իրականացնում է դրանց վերացմանն ուղղված միջոցառումներ,
- գործառնական և տեխնոլոգիական միջոցների, սարքերի, տեղեկատվական համակարգերի խափանումների պատճառների վերլուծություն, դրանց վերացմանն ուղղված միջոցների մշակում ու իրականացում,
- խափանումների դեպքում գործառնական և տեխնոլոգիական միջոցների, սարքերի, տեղեկատվական համակարգերի գործառնային հնարավորությունների ապահովում (կայուն խափանման նկատմամբ), շահագործման թերությունների բացահայտման նպատակներով դրանց թեստավորում, իսկ նշված թերությունները բացահայտելու դեպքում՝ դրանց վերացմանն ուղղված միջոցների կիրառում,
- սեփական ֆինանսական կայունության, այսինքն՝ իրացվելիության ապահովում, տնտեսական նորմատիվների պահպանում, ֆինանսական ցուցանիշների ապահովում՝ ՀՀ ԿԲ պահանջներին համապատասխան, Մասնակիցների սահմանաչափերի հսկողություն՝ Մասնակիցների կողմից Համակարգի Օպերատորի հետ հաշվարկների իրականացման համար բավարար դրամական միջոցների ապահովման մասով:

9.8. Համակարգի Օպերատորն իրավունք ունի ձեռնարկել այլ միջոցներ՝ ուղղված Համակարգի անխափան աշխատանքի ապահովմանը, որոնք շարադրված են սույն կանոնակարգին կից ներկայացվող “Կոնվերս Տրանսֆեր” համակարգի ռիսկերի կառավարման կարգում:

10. ՓՈՂԵՐԻ ԼՎԱՑՄԱՆ ԵՎ ԱՀԱԲԵԿԶՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐ

10.1. Համակարգի յուրաքանչյուր Մասնակից պարտավոր է դրամական փոխանցումներ իրականացնելիս և վճարելիս պահպանել փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման (ՓԼ/ԱՖ) դեմ պայքարի օրենսդրական պահանջները, կատարել Օպերատորի երկրի օրենսդրության պահանջները, եթե դրանք սահմանում են ավելի խիստ նորմեր, քան սեփական երկրի օրենսդրությունը: Մասնավորապես, յուրաքանչյուր Մասնակից պարտավոր է խստորեն պահպանել հաճախորդների պատշաճ ուսումնասիրության և հավելյալ պատշաճ ուսումնասիրության պահանջները՝ ռիսկերի վրա հիմնված մոտեցման կիրառմամբ, կատարել հաճախորդների պատշաճ ուսումնասիրությանը հարակից պարտավորությունների և տեղեկատվության պահպանման պահանջները, կասկածելի գործարքների բացահայտման, կասեցման, ահաբեկչության հետ կապված անձանց գույքի ստեղծման պահանջները և այլ պահանջներ, որոնք սահմանված են ՓԼ/ԱՖ

դեմ պայքարին առնչվող օրենքներով, ենթաօրենսդրական ակտերով ու միջազգային համապատասխան փաստաթղթերով:

10.2. Յուրաքանչյուր Մասնակից պարտավոր է նաև Բանկի օպերատորների միջոցով հաճախորդներին իրազեկել ներկայումս միջազգային պրակտիկայում հանդիպող զանգվածային մարկետինգի մոդելով խարդախության սխեմաների էության, տեսակների և վտանգների մասին՝ հաճախորդների իրավունքները պաշտպանելու և հնարավոր զեղծարարություններից զերծ պահելու համար:

10.3. Յուրաքանչյուր մասնակից ՓԼ/ԱՖ դեմ պայքարի օրենսդրական պահանջների արդյունավետ իրականացման համար պարտավոր է պարբերաբար կազմակերպել Բանկի օպերատորների պատշաճ ուսուցում և այդ ոլորտում գիտելիքների համապատասխանության ստուգում:

10.4. Համակարգի Մասնակիցներից յուրաքանչյուրը ինքնուրույն է ապահովում ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջոցները, դրանց կիրառումը և տեղեկացման ենթակա գործարքների մասով համապատասխան տեղեկությունների փոխանցումը լիազոր մարմին:

10.5. Համակարգի Մասնակից ռեզիդենտ կազմակերպությունները, ինչպես նաև Համակարգի Օպերատորը ՓԼ/ԱՖ դեմ պայքարի միջոցներ կիրառելիս ղեկավարվում են ՓԼ/ԱՖ դեմ պայքարը կարգավորող ՀՀ գործող օրենսդրության, ինչպես նաև այլ իրավական ակտերի պահանջներով:

10.6. Արտասավոր կամ կասկածելի գործարքներ հայտնաբերելու դեպքում Համակարգի Օպերատորը իրավունք ունի տվյալ գործարքի մասով տեղեկություններ պահանջել այն Մասնակցից, որի կողմից տվյալ գործարքը մուտքագրվել է Համակարգ, իսկ տվյալ Մասնակիցը պարտավոր է 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել պահանջված տեղեկությունները: Նախքան անհրաժեշտ տեղեկությունների տրամադրումը Համակարգի Օպերատորը իրավունք ունի կասեցնել, իսկ տեղեկությունները սահմանված ժամկետում չտրամադրելու դեպքում՝ մերժել գործարքի տրամադրումը:

10.7. Կասկածելի գործարք հայտնաբերելու դեպքում Համակարգի Օպերատորը իրեն իրավունք է վերապահում մինչև 5 (հինգ) օրով կասեցնել և/կամ մերժել տվյալ գործարքի կատարումը:

11. ԹԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ.

11.1. Մասնակիցների և Օպերատորի միջև բոլոր վեճերը կարգավորվում են արտադատական բողոքարկման կարգով:

11.2. Մասնակիցը, որի իրավունքը խախտվել է, Օպերատորին պատճառաբանված բողոք է ներկայացնում, որպեսզի վերջինս այն ուղարկի խախտումը թույլ տված անձին, կամ էլ հարցում է ուղարկում Օպերատորին՝ բողոք պատրաստելու համար տեղեկատվություն տրամադրելու խնդրանքով: Օպերատորը բողոքը ստանալուց հետո ոչ ավելին, քան 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում բողոքը ուղարկում է հասցեատիրոջը ուղեկցող նամակով, որում ներկայացնում է իր տեսակետը վիճահարույց հարցի վերաբերյալ կամ էլ ուղարկում է բողոքի պատրաստման համար պահանջվող նյութերը: Մասնակիցը նաև իրավունք ունի լրացուցիչ կերպով իր բողոքը ներկայացնել այն անձին, որն ուղղակիորեն խախտել է իր իրավունքը:

11.3. Բողոքներն ուղարկվում են նաև Օպերատորի միջոցով, որը 11.2 կետում նշված ժամանակահատվածում դրանք ուղարկում է հասցեատիրոջը՝ կցելով իր ուղեկցող նամակը:

11.4. Այն դեպքում, եթե բողոքի ստացումից 30 (երեսուն) օր հետո կողմերին չի հաջողվում կարգավորել բոլոր վիճահարույց հարցերը, վեճը լուծվում է ՀՀ գործող օրենսդրության համաձայն: Օպերատորը պարտավոր է գրավոր կերպով ներկայացնել վիճահարույց դրությունը լուծելու համար

անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը և նյութերը: Օպերատորի ներկայացուցիչների մասնակցությունը դատական նիստերին, այդ մասնակցության հետ կապված բոլոր ծախսերը փոխհատուցելու պայմանը, բանակցային ճանապարհով լրացուցիչ համաձայնեցվում է կողմերի միջև:

12. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ. ՏՈՒԳԱՆՔՆԵՐ

12.1. Եթե Կողմերը ժամանակին կամ պատշաճ չեն կատարել Կանոնակարգով սահմանված իրենց պարտավորությունները, ապա նրանք պատասխանատվություն են կրում ՀՀ գործող օրենսդրության և Կանոնակարգին համապատասխան:

12.2. Համակարգի մասնակիցները, այդ թվում Համակարգի օպերատորը պատասխանատվություն են կրում Կանոնակարգի 3-րդ բաժնում նշված իրենց պարտականությունները չկատարելու համար՝ փոխանցված գումարի 5%-ի, բայց ոչ ավելին, քան 50,0 հազար ՀՀ դրամ գումարի սահմաններում: Պարտավորությունների չկատարման համար հաստատում է հանդիսանում Փոխանցողի կամ Ստացողի Բանկի գրավոր մերժումը Դրամական փոխանցումը ի կատարում ընդունելու/վճարելու համար: Հաճախորդի դիմումը պետք է ներառի Հաճախորդի անունը, ազգանունը, հայրանունը, դիմելու ամսաթիվը, Մասնակցի լրիվ անվանումը, պարտավորություններից հրաժարվելու պատճառը, փոխանցման վճարումից հրաժարման դեպքում նաև փոխանցման համարը, և այն աշխատակցի անունը, որը մերժել է վճարել փոխանցումը:

12.3. Օպերատորը պատասխանատվություն չի կրում այն վնասների համար, որոնք կարող են կրել Մասնակիցները կամ նրանց հաճախորդները (Փոխանցողը, Ստացողը), կապված Համակարգ ներկայացված տեղեկատվության սխալ կամ թերի լինելու հետ:

12.4. Համակարգի աշխատանքում խախտումներ կամ թերություններ լինելու դեպքում Օպերատորը պարտավոր է ոչ ավելին, քան 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում վերացնել այդ թերությունները կամ հանգամանքները, և ապահովել Համակարգում համապատասխան գործողությունների պատշաճ կատարումը: Նման խախտումների համար տույժեր և տուգանքներ չեն կիրառվում:

12.5. Օպերատորը պատասխանատվություն չի կրում Համակարգի աշխատանքներում տեղի ունեցած այն խախտումների համար, որոնք առաջացել են.

- Մասնակցի կողմից Համակարգի ծրագրային ապահովման ոչ ճիշտ օգտագործման հետևանքով,
- Համակարգի ծրագրային ապահովման հետ աշխատող Մասնակցի անձնակազմի ոչ պրոֆեսիոնալ գործողությունների հետևանքով,
- Համակարգում աշխատանքի համար նախատեսված Մասնակցի սարքավորումների (այդ թվում՝ կապի միջոցների) անսարքության հետևանքով,
- Համակարգի ծրագրային-տեխնիկական համալիր գործողությունների վրա Մասնակցի վնասակար ծրագրերի ազդեցության հետևանքով,
- Ծառայության ծրագրային-տեխնիկական համալիր միջոցներին Մասնակցի չլիազորված անձանց մուտք գործելու հետևանքով:

12.6. Օպերատորը պատասխանատվություն չի կրում այն վնասների համար, որոնք կարող են կրել Մասնակիցները և նրանց հաճախորդները (Փոխանցողը, Ստացողը)՝ կապված Համակարգի աշխատանքներում մասնակցության հետ, բացառությամբ այն դեպքերի, եթե Օպերատորը խախտել է իր պարտավորությունները:

13. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

13.1. Մասնակիցները և Օպերատորը պարտավորվում են պահպանել Դրամական փոխանցումների գծով բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունները՝ անկախ վերջիններիս միջև պայմանագրային հարաբերությունների դադարեցման հանգամանքից: Այդպիսի տեղեկատվություն տրամադրվում է միայն կողմերի լիազոր ներկայացուցիչներին, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

13.2. Մասնակիցները և Օպերատորը պարտավորվում են պահպանել Համակարգում կատարվող գործողությունների վերաբերյալ տեղեկությունների գաղտնիությունը:

13.3. Մասնակիցները և Օպերատորը գալիս են համաձայնության, որ Համակարգում Օպերատորի կողմից ինֆորմացիայի մշակումը չի խախտում նրանց սեփականության իրավունքը, տվյալ տեղեկատվության հանդեպ նրանց հաճախորդների իրավունքները, ինչպես նաև չի խախտում գաղտնիության պայմանները:

14. ՏՈՐՄ-ՄԱԺՈՐ

14.1. Մասնակիցները և Օպերատորը ազատվում են Համաձայնագրով կամ Կանոնակարգով հաստատված պարտավորությունները մասամբ կամ ամբողջությամբ չկատարելու համար պատասխանատվությունից այն դեպքում, եթե առաջ է գալիս անհաղթահարելի ուժի ազդեցությունը, որն ազդում է Մասնակիցների և Օպերատորի կողմից պարտականությունների կատարման վրա, և որը վերջիններս չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

14.2. Անհաղթահարելի ուժի հանգամանք են համարվում այն իրադարձությունները, որոնց վրա Մասնակիցները և Օպերատորը չեն կարող ներգործել, և որոնց առաջացման համար նրանք պատասխանատվություն չեն կրում, օրինակ՝ երկրաշարժ, ջրհեղեղ, փոթորիկ այլ տարերային աղետներ, ինչպես նաև պատերազմներ, ռազմական գործողություններ, հրդեհ, վթար, պետական մարմինների հատուկ որոշումներ և հրամաններ:

14.3. Մասնակիցը, որն ի վիճակի չէ կատարել իր պարտավորությունները անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, պարտավոր է անմիջապես գրավոր ձևով տեղեկացնել Օպերատորին այդ հանգամանքների մասին, նկարագրել դրանք, գնահատել, թե որքանով են դրանք ազդում իր գործողությունների վրա, ինչպես նաև ներկայացնել պարտավորությունների կատարման ենթադրյալ ժամկետը: Օպերատորը Մասնակցի կողմից տրամադրած տեղեկատվությունը, ինչպես նաև Օպերատորի կողմից պարտավորությունները կատարելու անհնարինության փաստի մասին ինֆորմացիան տեղադրում է Համակարգում ոչ ուշ, քան տեղեկատվության ստացմանը հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

14.4. Անհաղթահարելի ուժի ազդեցության հանգամանքների առաջացման դեպքում պարտավորությունների կատարման ժամկետը հետաձգվում է անորոշ ժամկետով: Անհաղթահարելի ուժի ազդեցության հանգամանքների առաջացման սկզբի և վերջի մասին վեճի

առաջացման դեպքում, վեճը լուծվում է ժամկետների մասին պետական մարմինների կողմից տրամադրված համապատասխան փաստաթղթային հաստատում ներկայացնելու ճանապարհով:

15. ԿԱՆՈՆԱԿԱՐԳԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՍԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

15.1. Կանոնակարգում կատարված փոփոխությունները հաստատվում են Օպերատորի կառավարման իրավասու մարմնի կողմից:

15.2. Կանոնակարգում հաստատված փոփոխությունները Համակարգի օպերատորը դիմումով ներկայացնում է նախնական համաձայնեցման ՀՀ կենտրոնական բանկ, որը սահմանված ժամկետում տալիս է իր համաձայնությունը կամ չի մերժում դիմումը, ապա փոփոխություններն ուժի մեջ են մտնում:

15.3. Օպերատորն իրավասու է ինքնուրույն, միակողմանի կարգով փոխել Կանոնակարգի դրույթները: Օպերատորը Կանոնակարգի նոր խմբագրությունը տեղադրում է իր կայքում ոչ ուշ, քան դրա ուժի մեջ մտնելուց 1 (մեկ) ամիս առաջ:

15.4. Եթե Մասնակիցը համաձայն չէ Կանոնակարգի նոր խմբագրության հետ, ապա պետք է Օպերատորին պաշտոնական գրավոր ծանուցում ուղարկի Համակարգից անջատվելու կամ մինչև նոր խմբագրությամբ Կանոնակարգի ուժի մեջ մտնելը Համակարգից անջատվելու մասին:

15.5. Նոր խմբագրությամբ Կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո Մասնակիցները, Օպերատորը Համակարգում աշխատելու ընթացքում ղեկավարվում են վերջինով: Նոր խմբագրությամբ հաստատված Կանոնակարգի համաձայն աշխատանքների սկսումը ավտոմատ նշանակում է, որ Մասնակիցներն ու Օպերատորը լիովին համաձայն են Կանոնակարգով հաստատված նոր պայմանների և պարտավորությունների հետ:

16. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

16.1. Մասնակիցների հետ կնքվող մասնակցության պայմանագրով կարող են նախատեսվել դրույթներ, որոնք սահմանված չեն սույն Կանոններով:

16.2. Մասնակիցների հետ կնքված պայմանագրերի և Համակարգի Կանոնակարգի միջև հակասություններ առաջանալու դեպքում, հիմք է ընդունվում Համակարգի Կանոնակարգի դրույթները՝ նախապատվությունը տալով ՀՀ օրենսդրության կարգավորումներին, իսկ նման կարգավորումների բացակայության դեպքում միջազգայն կարգավորումներին:

ՏԱՌԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿԸ

а	a
б	b
в	v
г	g
д	d
е	e
ё	yo
ж	zh
з	z
и	i, i'
й	j
к	k
л	l
м	m
н	n
о	o
п	p
р	r
с	s
т	t
у	u
ф	f
х	x
ц	cz, c
ч	ch
ш	sh
щ	shh
ъ	``
ы	y'
ь	`
э	e`
ю	yu
я	ya
апостров '	'

ՄՏԱՑՈՂԻ ԱՆՈՒՆԸ ԳՐԵԼՈՒ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ,
որոնցով թույլատրվում է Դրամական փոխանցման հանձնումը

Իրար փոխարինող տառեր և տառակապակցություններ	Անունը գրելու տարբերակների օրինակներ
И-й	Аик-Айк
Е-ё	Трухачёва-Трухачева
Л-ль	Микаел-Микаель
е/э	Рафаел-Рафаэл
я/йя/йа, ю/йю/йу	Бабаян-Бабайан
Տառերի կրկնօրինակումը	Бэлла-Бэла Иполит-Ипполит Гаврил-Гавриил
օ-ա/ի-ե ձայնավորների գրումը	Даваян-Давоян
Բառավերջում նչեղ/խուլ բաղաձայնի գրելու տարբերակները	Давит-Давид
Անվան կամ ազգանվան վերջավորությունները. ья/ия, ея/еа а/я/и/е/э	Наталья-Наталия Карина-Каринэ
Հայրանունի վերջավորությունը. -евич/-иевич -ович/-евич -евна/-ивна -ична/-ишна	Аркадиевич-Аркадьевич Евгениевна-Евгеньевна
Ազգանունների վերջավորությունը. -айдзе/-адзе -ашвили/-ишвили -илава/-алава -иан/ян/янц -джан/джян	Чихлаидзе-Чихладзе Маркариан-Маркарян
Տարբեր լեզուներով հայրանունը գրելու տարբերակները. -ович(евич)/-и	Альбертович/Альберти Александрович/Александревич
Անվան լրիվ կամ կարճ տարբերակը	Саша-Александр Хачик-Хачатур